Հովհաննես Հովհաննիսյան

Դու երևացար ինչպես վառ գարնան . . .

Դու երևացար ինչպես վառ գարնան
Լուսաշող այգի, նշույլ ոսկեթույր .
Դու երևացար—ժպիտդ աննման
Քաղցր էր զերթ սիրո առաջին համբույր:

Ծաղկոցում բացվող քեզ վարդ կարծեցի,
Դըրախտի վայելք տեսա քո աչքում . . .
Ա՛խ, այդ աչերիդ ես զոհ բերեցի
Եվ անհոգ վիճակ, և սրտիս խնդում:

Եվ եթե դու էլ խաբում ես, ո՛վ կույս,
Սեր չէ խոստանում հայացքդ չքնաղ,
Թե այս անգամ էլ ունայն է իմ հույս,—
Դարձյալ պի՛տ օրհնեմ հասակդ մատաղ:

Պիտ օրհնեմ ես այն, թեպետ կարճատև,
Բայց վեհ, հոգեզմայլ հրճվանքի համար,
Որ հոգուս բերիր դու, ինչպես արև,
Ինչպես խնկաբույր մայիս կենարար: